«Ադրբեջանական ճոպանը» իրանա-իսրայելական հակամարտությունում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 24.10.2024 թ.[1]

14.10.2024 թ. Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը Թեհրանում ընդունել է Ադրբեջանի պատվիրակությանը՝ փոխվարչապետ Շահին Մուստաֆաևի գլխավորությամբ: Բանակցությունների բովանդակության վերաբերյալ կողմերի պաշտոնական հաղորդագրությունները տարբերվում են:

Տեղական ԶԼՄ-ներին տրամադրված Բաքվի պաշտոնական տեղեկատվության մեջ միայն հիշատակվում է գյուղատնտեսության, էներգետիկ և ճանապարհային ոլորտներում համագործակցության շուրջ զրույցը: Հաղորդվում է նաև, որ Շ. Մուստաֆաևն ԻԻՀ նախագահին հանձնել է Բաքվում կայանալիք COP29 խորհրդաժողովին մասնակցության պաշտոնական հրավեր:

Մինչդեռ իրանական հաղորդագրությունը շեշտադրում է Մ. Փեզեշքիանի խոսքերն Իրանի, Ադրբեջանի և մյուս հարևանների տարածաշրջանային խնդիրներին արտաքին խաղացողների միջամտության անթույլատրելիության մասին: Մասնավորապես, Իրանի նախագահը «*զգուշացրել է, որ տարածաշրջանում արտատարածաշրջանային պետությունների ռազմահենադաշտի ստեղծումը չի համապատասխանի տարածաշրջանի երկրների շահերին*»: Նաև, համաձայն իրանական ամփոփագրի, Փեզեշքիանը հաստատել է Իրանի հարգանքն Ադրբեջանի տարածքային ամբողջականության նկատմամբ և կարծիք հայտնել, որ կարելի է անվտանգությունն ապահովել և բոլոր հիմնախնդիրները լուծել համագործակցության ճանապարհով:

Դժվար չէ կռահել, որ Մ. Փեզեշքիանը նկատի ուներ Ադրբեջանում Իսրայելի աճող ռազմաքաղաքական ներկայությունը և Բաքվի բարձրաստիճան պաշտոնյային հասկացրել է, որ Թեհրանը հյուսիսային հարևանին առաջվա պես դիտարկում է որպես ռազմահենադաշտ, որը թշնամական գործողությունների է պատրաստվում Իսլամական Հանրապետության հանդեպ: Եվ Իրանի նախագահը, փաստորեն, բաց տեքստով հասկացրել է, որ քանի դեռ Բաքուն չի դադարեցրել սերտ ռազմաքաղաքական փոխգործակցությունը Թել Ավիվի հետ, Ադրբեջանը միշտ էլ ենթակա կլինի իրանական հարվածի սպառնալիքին:

Հարկ է ենթադրել, որ Բաքուն կնախընտրեր Լիբանանում վերջին իրադարձությունների և իրանա-իսրայելական հակամարտության խնդիրների ընդհանուր իրավիճակի համապատկերում մի ավելորդ անգամ ևս գրգռվածության ու կասկածների առիթ չտալ Իրանին: Հատկապես հիմա, երբ իսրայելական պատասխան հարձակմանն իր սպասման մեջ Իրանը ծայր աստիճան վտանգավոր է, և դժվար է կանխատեսել նրա հետագա քայլերը: Վտանգավոր զարգացումների նախաշեմին Ի. Ալիևի վարչախումբը

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 17.10.2024 թ.:

պետք է որ «պահ մտնի», հույս ունենալով, որ իրանա-իսրայելական «փոթորիկը» կանցնի Ադրբեջանի կողքով:

Սակայն այժմ դա արդեն հազիվ թե հնարավոր է:

14.10.2024 թ. Շ. Մուստաֆաևի հետ Մ. Փեզեշքիանի հանդիպումից անմիջապես հետո Իսրայելի էներգետիկայի և ենթակառուցվածքի նախարար Էլի Կոենը Թել Ավիվում հանդիպել է Ադրբեջանի դեսպան Մուխթար Մամեդովի հետ: Ուշագրավ է, որ սոցցանցերում հանդիպման մասին իր գրառման մեջ Է. Կոենն անդրադարձել է ոչ թե երկրների էներգետիկ համագործակցության հարցերին, որոնց, իբր թե, նվիրված էր հանդիպումը, այլ զուտ քաղաքական օրակարգին: Նա, մասնավորապես, գրել է. «*Լինելով արտաքին գործերի նախարար, ես բացել եմ Ադրբեջանի դեսպանությունն Իսրայելում՝ շիական երկրի առաջին դեսպանությունը: Ադրբեջանի հետ մեր հարաբերությունները ռազմավարական են, և ես մտադիր եմ շարունակել աշխատանքը մեր երկրների միջև բոլոր մակարդակներում հարաբերությունների ամրապնդման վրա*»:

Ի սկզբանե՝ առաջնային նշանակության իրադարձություն չէ տնտեսական բլոկի իսրայելցի նախարարի և Ադրբեջանի դեսպանի հանդիպումը, բայց այն փաստը, որ դա, փաստորեն, կազմակերպվել է Թեհրանում իրանա-ադրբեջանական բանակցությունների հետ միաժամանակ ու լայնորեն լուսաբանվել իսրայելական ԶԼՄ-ներում (ի տարբերություն ադրբեջանականի), վկայում է այն կոնկրետ հղումների մասին, որոնք Թել Ավիվն ուղղում է Թեհրանին ու, գլխավորապես, Բաքվին:

Ակնհայտ է՝ Իսրայելը դրանով իսկ նախազգուշացնում է, որ մտադիր չէ հրաժարվել Ադրբեջանին իրեն կապակցելու հետևողական քաղաքականությունից, նույնիսկ եթե դա կարող է տանել Բաքվի համար իրանական սպառնալիքի ուժեղացման: Վերջնական արդյունքում, ինչպես կարծում են շատ վերլուծաբաններ, հրեական պետությունը վերջին տարիներին հենց դրան էր ձգտում, երբ ԱդրՀ-ին աջակցում էր ԼՂՀ-ի զավթման խնդրում, Բաքվին զենք և տեխնոլոգիաներ մատակարարում, ադրբեջանական նավթ գնում և, ի վերջո, Ալիևների ընտանիքի ներդրումները շահեկանորեն տեղադրում իսրայելական անշարժ գույքի ոլորտում: Այս նախապատվություններն էլ հենց դարձան Իսրայելի նկատմամբ Ադրբեջանի բարեհաճ վերաբերմունքի և Բաքվի հետ Իրանի հարաբերությունների անխուսափելի վատթարացման գինը:

Դրանով իսկ Ադրբեջանի համար օրեցօր ավելի ու ավելի դժվար է դառնում հավասարակշռություն պահպանել վերը նշված երկու պատերազմող պետությունների հետ իր հարաբերություններում և խուսափել նրանց արանքում «ճզմվելու» վտանգից, եթե դրանք բախվեն լայնածավալ պատերազմում: